Վաղ առաւօտեան Ասլանը ինձ զարթեցրուց: Ես շատ նեղացայ: Այս մարդը դեւի նման քուն չունէր, ինձ էլ անհանգիստ էր անում: Մըհէն արդէն գնացել էր. ես նրան տեսնել չկարողացայ: Բայց Ասլանը, նկատելով իմ վրդովմունքը, մի առանձին կարեկցութեամբ ասաց.

— Ես գիտէի, որ քունը քաղցր էր քեզ համար, բայց ես ցոյց կը տամ քեզ մի տեսարան, եւ դու կը ներես, որ քեզ անհանգիստ արեցի:

Նոյն միջոցին ես լսեցի մի տխուր երգի ձայն.

«Այն քաջ մարդու շապիկն է դա,

Որ իմ ձեռքով կարեցի.

Արիւնոտ է, կարմիր ներկած,

Արտասուքով լոացի:

Դա շապիկն է այն քաջ մարդու,

Որ քեզի հայր կոչւում է,

«Վըրե՛ժ, վրրե՛ժ չար ոսոխիցէ

Գերեզմանից կանչում է:

Դէ՛, մեծացիր, իմ նազելի,

Չարի արիւնը խմէ՛,

Քո մօր սրտին մխիթարանք,

Ուրախութիւն պարգեւէ՛»:

Սարսափելի՛ մի տեսարան էր այդ: Մի մանկահասակ տիկին նստացրել էր իր փոքրիկ երեխային մոխիրների կոյտի վրայ, եւ նրա վզին գցել էր արեան մէջ շաղախոած մի շապիկ: Նա մոխիրը ճանկերով առնում էր գետնից, ցրւում էր իր գլխի վրայ, լաց էր լինում, եւ դառն ձայնով եղանակում էր յիշեալ երգը:

— Այս այն տիկինն է, — ասաց Ասլանը, — որ գիշերը իր աղախնին ուղարկեց բէկի մօտ, խնդրելու, որ չասել տայ այն երգերը, որոնք յարուցանում էին նրա մէջ տխուր զգացմունքներ: Ամէն առաւօտ, արեւածագից առաջ, ես տեսնում եմ սրան, այսպէս լաց է լինում, սովորեցնում է իր զաւակին վրէժխնդիր լինել հօր մահոան համար: Սովորեցնում է քաջ լինել...: Այսպէս կրթում է դիւցազնական մայրը իր որդուն, այսպէս պատրաստում է նրան այն կեանքի համար, որ առանց սրի եւ արիւնի կեանք չէ:

Մի առանձին զգացմունքով արտասանեց Ասլանը այս խօսքերը: Ռոպէական լռութիւնից յետոյ նա շարունակեց.